

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՉՈՐՍ ԲԱՐՉՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈԽԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱԸ ԸՆԹԱՅՔՈՒՄ

ԴԱ ՎՐԱՑ-ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Է՛Լ ԱՎԵԼԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ Է

Անցնող շաբաթը բավական արգասաբեր էր վրաց-հայկական միջպետական հարաբերություններին լրացուցիչ ազդակ հաղորդելու տեսանկյունից: Մեկ շաբաթվա ընթացքում պաշտոնական այցով Վրաստանում էին գտնվում Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը: Նույն ժամանակահատվածում, պաշտոնական այցով Երևանում էր գտնվում Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին:

ԵՐԿԿՈՐՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մայիսի 4-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

Հայաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, իր վրաց գործընկեր, Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանչեր Բուրժուլաձեի հետ:

Այցի մեկնարկի, կայացավ Վրաստանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարների հանդիպումը, որտեղ քննարկվեցին պաշտպանական ոլորտում երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները ռազմակրթության, փորձի փոխանակման, բարեվարքության եւ մարդու իրա-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԼԱՎ ՀԵՆՔ՝ ՓՈԽԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

ՎՐԱՍԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրիլի 30-ին պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին: Այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը բանակցություններ վարեց իր հայ գործընկեր, Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ, հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, նախագահ Վահագն Խաչատուրյանի, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:

Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպմանը Հայաստանի կառավարության ղեկավարը հյուրին շնորհավորեց Վրաստանի ԱԳ նախարարի պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ եւ մաղթեց արդյունավետ աշխատանք: Բարձր գնահատելով հայ-վրացական բարեկամությունը՝ Նիկոլ



Փաշինյանը նշեց. (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՑ-ՀԱՅՎԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆ ՀԱՐԹԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՎՐԱՍԱՆ

Ապրիլի 30-մայիսի 2-ը, եռօրյա աշխատանքային այցով, Վրաստանում էր գտնվում Հայաստանի արդարադատության նախարարության պատվիրակությունը՝ Հայաստանի արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում, Վրաստանի եւ Հայաստանի արդարադատության նախարարներ Ռատի Բրեգաձեի եւ Կարեն Անդրե-

ասյանի մասնակցությամբ, անցկացվեց վրաց-հայկական իրավական համաժողով, որի ընթացքում քննարկվեցին իրավական

ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնման ու խորացման առնչվող հարցեր: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ԽՆՎԱԳ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՉԵՐՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՅՔՈՒՄ

Մայիսի 4-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Այցի շրջանակներում, Արմեն Գրիգորյանը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակ-

լի Դարիբաշվիլու, իր վրաց գործընկեր, Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլիի հետ: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՎՐԱՍԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԱՎԱՆԴ ՆԵՐԴՐԵՑԻՆ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ

Մայիսի 9-ին նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 77-րդ տարին:



1945 թվականի մայիսի 9-ին ստորագրվեց ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում հաղթանակով պսակվեց 1418 օրուգիշեր տևած մահուկենաց կռիվը:

Մեծ հաղթանակի գործում իրենց արժանի ներդրումն ունեցան նաև վրաց եւ հայ ժողովուրդները: Վրաստանից եւ Հայաստանից պատերազմի ժամա-

նակ զորակոչվեց համապատասխանաբար՝ 600 եւ 520 հազար մարդ, որի կեսից ավելին զոհվեց մարտի դաշտում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՎԱՐՇՎԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՅԵՑ «ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մայիսի 5-ին Լեհաստանի վարչապետ Մատեուշ Մորավիեցկու եւ Շվեդիայի վարչապետ Մագդալենա Անդերսոնի, Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահներ Շառլ Միշելի եւ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի նախաձեռնությամբ, Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում անցկացվեց «Ուկրաինայի համար» բարձր մակարդակի դոնորների միջազգային համաժողով, որին մասնակցեցին Շվեդիայի, Իսպանիայի, Ուկրաինայի, Լիտվայի, Լատվիայի, Ալբանիայի, Խորվաթիայի, Իսլանդիայի, Սլովակիայի, Սլովենիայի եւ Նորվեգիայի վարչապետները:



Համաժողովին հնչեցրած խոսքում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նշեց, որ Վրաստանի կողմից իրականացրած ներդրումը կազմում է 7 միլիոն դոլար:

Համաժողովի մասնակիցները քննարկեցին Ուկրաինայում շարունակվող ռազմական գործողությունների արդյունքում ստեղծված իրավիճակը եւ հունամիտար ու տնտեսական ճգնաժամի կարգավորման ուղիները:

Մեքե կշարունակենք Ուկրաինային լրացուցիչ օգնություն տրամադրել եւս 7 միլիոն դոլարով, - հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

Վարշավայում կայացած դոնորների համաժողովի մասնակիցները Ուկրաինային օգնելու համար հավաքեցին 6,5 միլիարդ դոլար:

ԱՅՑ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Մայիսի 2-3-ը Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Գերմանիայում:



Դիմավորման արարողությունը կայացավ Բեռլին-Բրանդենբուրգ միջազգային օդանավակայանում՝ պատվո պահակախմբի ուղեկցությամբ:

Այցի շրջանակներում, Բեռլինի Բելկյու պալատում Վրաստանի նախագահը առանձնազրույց ունեցավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ, ապա բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով: Կողմերը քննարկեցին վրաց-

գերմանական հարաբերությունների զարգացման հնարավորությունները, Եվամիությանն ու ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարները:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱՆԵՏԳՐՈՒՄ

ՎՐԱՍԱՆԸ ՀԱՆՁՆԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԱՆԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ



Ինչպես արդեն հաղորդել ենք, ի պատասխան Եվրամիության անդամակցությանը Վրաստանի ներկայացրած հայտի, Եվրահանձնաժողովը հանձնել էր հատուկ հարցաշար, որի ժամանակին ու մանրամասն լրացումից հետո, կհասակեցվեր Միությանը Վրաստանի անդամակցության հարցը:

Մայիսի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Կարլ Յարցելին հանձնեց Եվրահանձնաժողովի հարցաթերթիկի առաջին մասը, որն արդեն լրացրել էր:

- Ես պատիվ ունեմ ձեզ տրամադրել Եվրահանձնաժողովի հարցաշարի մեր պատասխանները՝ նախապատրաստվելով Եվրամիությանը Վրաստանի անդամակցության դիմումի վերջաբանը,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանի կառավարությունը, բոլոր համապատասխան պետական գերատեսչությունները շարունակում են ինտենսիվ աշխատել հարցաշարի երկրորդ ոլորտային մասի լրացման ուղղությամբ, որը ներառում է 33 գլուխ եւ գրեթե 2300 հարց:

Եվրամիության դեսպանը հաջողություն մաղթեց Վրաստանին:

Նշենք, որ լրացված հարցաշարը ստանալուց հետո, Եվրահանձնաժողովը կսկսի պատրաստել սեփական գնահատման զեկույցը, որը կներկայացվի Եվրամիության խորհրդին, իսկ համապատասխան որոշումը սպասվում է հունիսի վերջին:



ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է

Վրաստանի խորհրդարանը՝ 87 ձայնով, ընդունեց «Վրաստանի պետական խորհրդանշանների օգտագործման կանոնների մասին» օրենքում փոփոխությունը, ըստ որի, Վրաստանի պետական դրոշի մշտական բարձրացումը պարտադիր է դարձել հանրակրթական հաստատության/դպրոցի, ինչպես նաեւ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձի շենքերի վրա, որը նախատեսում է նախադպրոցական կրթական ծառայություններ:

Փոփոխությունների համաձայն, պարտադիր է դարձել նաեւ նշված հաստատություններում տեսանելի տեղում Վրաստանի օրհներգի տեքստի տեղադրումը:



ԲԱՆԱԿ

ԲԱՆԱԿԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ

Ապրիլի 30-ին Վրաստանում նշվեց Պաշտպանության գործերի օրը:

Տոնի առիթով, Վրաստանի զինված ուժերի Վազհանիի IV հետեւակային բրիգադի բազայում անցկացվեց միջոցառում, որին ներկա էին եւ Ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, Վրաստանի պաշտպանության նախարար Ջուրաբեր Բուրժուլաձեն, երկրի կառավարության եւ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ:



Իրակլի Դարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկերներին, ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ի անդամ երկրներին վրացական բանակի հզորացման

աջակցելու համար: Վրաստանի Ջինված ուժերի պաշտպանության գործերի տոնի առիթով ողջույնի ուղերձով զինծառայողներին դիմեց պաշտոնական այցով Գեմանիայում գտնվող, Վաստանի Ջինված ուժերի զխավոր համաձայնագրի, Վրաստանի նախագահ Սալուձե Ջուրաբիշվիլին:



ՊԱՏԺՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, մեկնաբանելով Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սասակաշվիլու ընտանիքի կողմից իշխանությունների առաջադրած վերջնագիրը եւ ընդդիմության կողմից Միխեիլ Սասակաշվիլու բուժման համար այլ երկիր տեղափոխելու պահանջով սկսած քարոզարշավը, հայտարարեց, որ դրա նպատակը՝ միայն նախկին նախագահին բանտից ազատ արձակելն է, «արժանի պատիժը կանխելը»:



- Բոլոր բանտարկյալները պետք է ապահովված լինեն հուսալի բժշկական սպասարկմամբ, եւ դա վրացական բանտերում կարգավորված է: Բոլոր բանտարկյալները, անկախ իրենց կարգավիճակից, ստանում են բժշկական համապատասխան օգնություն: Բացառություն չի կազմում նաեւ Միխեիլ Սասակաշվիլին, որն արդեն իսկ դատապարտված է խորհրդարանի պատգամավորին ծեծելու, ինչպես նաեւ Սանդրո Գիրգվիլանու սպանության մասնակիցներին հովանավորելու համար, ինչը հաստատվել է Ստրասբուրգի դատարանում,- հայտարարեց Շավլա Պապուաշվիլին:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԽԱՂԱՐԿՎԵՑ «ԱԽԱԼՔԱԼՔԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳԱՎԱԹԸ»



Մայիսի 4-ին եզրագիծը հատեց «Ախալքալքիի քաղաքապետի գավաթի» վոլեյբոլի մրցաշարը: Պարգևատրելով մրցաշարի հաղթողներին՝ Ախալքալքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանը նշեց, որ քաղաքապետարանի կողմից կազմակերպված մրցաշարը իրականացվում է երիտասարդների մարզական ակտիվության խրախուսման ու բարձրացման նպատակով:

- Զուտով ենք, որ աշնանը կկազմակերպենք մեկ այլ մրցաշար, ավելի մեծ թվով մասնակիցներով,- հայտարարեց Մելքոն Մակարյանը:

Նշենք, որ «Ախալքալքիի քաղաքապետի գավաթի» խաղարկմանը մասնակցեցին մունիցիպալիտետի Կոչիո-Խավթե, Բուզավե-Դադեշ, Կարտկվան-Դադլար, Գումբուրդո-Բուդաշեն, Վաչիան-Չունջխա, Չամդուրա-Իխտիլա, Կիրովական-Սուլդա, Ազավրեթ-Սամսար, Ջակ-Օրջա, Խուլգուն-Ախալքալքի 20 թիմեր:

Երկու օր տևած մրցաշարի՝ «Ախալքալքիի քաղաքապետի գավաթը» նվաճեց Մեծ Սամսար գյուղի թիմը: Մրցաշարում երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրին Օրջա եւ Դադեշ գյուղերի վոլեյբոլիստները:

ԶԲՈՍԱՆԵՐՁՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԱԽԱԼՔԻՒՆՈՒՄ

Մայիսի 4-ին, Ախալքալքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանում անցկացվեց երկրամասի զբոսաշրջության տեղեկատվական քարտեզի շնորհանդեսը: Միջոցառմանը մասնակցում էին Ախալքալքիի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, տեղական ինքնակառավարման, Ախալքալքիի մեծամասնական պատգամավորի բյուրոյի եւ զբոսաշրջության ոլորտում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Շնորհանդեսին բարձր գնահատական տրվեց տեղեկատվական քարտեզին: Նշվեց, որ այն առանձնակի պահանջարկ կվայելի զբոսաշրջիկների շրջանում: Տեղեկատվական քարտեզները փոխանցվեցին Սամցխե-Ջավախթեի տեղական կառավարման կազմակերպությանը, ոչ կոմերցիոն «Ախալքալքիի բերդ» իրավական անձին, այլ կազմակերպությունների:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ ՎԵՐՍԿԱԿԵՑ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ԹԻՎ 1 ԴՊՐՈՑԻ ՆՈՐՈԳՎԱԾ ՇԵՆՔՈՒՄ

Մայիսի 2-ից Նինոծմինդա քաղաքի թիվ 1 դպրոցում վերսկսվել է ուսումնական գործընթացը: Աշակերտները երկամյա ընդմիջումից հետո դասերն անցկացրին իրենց նոր վերանորոգված դպրոցում: Նշենք, որ այդ ընթացքում դասերը տարվում էին քաղաքի թիվ 2 դպրոցում:

Վերանորոգման աշխատանքները սկսվել են 2020 թվականի հոկտեմբերին: Կառուցվել է 500 քմ մակերեսով նոր շենք, ամրացվել են հին շենքի պատերը, ներկվել է շենքի ճակատը: Դպրոցն ունի հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված վերելակ, բուժսենյակ, 20 դասասենյակ, կենտրոնացված ջեռուցում, սանհանգույց: Դպրոցի տարածքում կառուցվել է մարզադաշտ:

Նշենք, որ թիվ 1 դպրոցը կառուցվել է 1938թ.: Տարիների ընթացքում կատարվել են միայն մասնակի կոսմետիկ վերանորոգումներ: Նինոծմինդայի թիվ 1 դպրոցը կիսավեր վիճակում էր:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՊԱՐԻ ՓՈՒԱՏՈՆ ԱԽԱԼՔԱԼՔԻՈՒՄ

Ապրիլի 29-ին՝ Պարի միջազգային օրը, Ախալքալքիի մշակույթի տանը անցկացվեց փառատոն, որտեղ հանդես եկան Ախալքալքիի, Նինոծմինդայի եւ Ասպինձայի մունիցիպալիտետներում գործող համույթները:

Նախքան միջոցառման մեկնարկը պարային խմբերը քայլերթով անցան քաղաքի փողոցներով՝ վանկարկելով իրենց համույթի անունը:

Միջոցառումը բացեց փառատոնի կազմակերպիչ եւ «Ջավախք» պարային համույթի ղեկավար Ալիկ Քապոյանը: Ելույթ ունեցան 27 պարային խմբեր՝ ներկայացնելով հայկական եւ վրացական ազգային ու ժողովրդական պարեր:

Փառատոնի վերջում պարուսույցները ստացան հավաստագրեր:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՉՈՐՐ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈԽԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԿ ՀԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՋՔՈՒՄ

ԴԱ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Է՛Լ ԱՎԵԼԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է ԼԱՎ ՇԵՆՔ՝ ՓՈԽԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վունքների, սոցիալական ապահովման եւ այլ ուղղություններով: Հանդիպման ավարտին ստորագրվեց Վրաստանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարությունների միջև 2022 թվականի ռազմական համագործակցության ծրագիրը:

Վրաստանի վարչապետի եւ Հայաստանի պաշտպանության նախարարի հանդիպմանը ներկայացվեցին պաշտպանական ոլորտում երկկողմ համագործակցության զարգացման ուղղությամբ ձեռք բերված պամանավորվածությունները:

Սուրեն Պապիկյանը ներկայացրել է նաեւ Հայաստանի կողմից տարածաշրջանում խաղաղու-

թյան հաստատմանն ուղղված քայլերը եւ կարելու է այդ գործընթացներում Վրաստանի դերակատարությունը: Հայաստանի պաշտպանության նախարարը Վրաստանի վարչապետին շնորհակալություն հայտնեց Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների հայրենադարձման ուղղությամբ գործադրած ջանքերի համար, որոնց շնորհիվ անցյալ տարվա հունիսի 12-ին Հայաստան էր վերադարձել 15 հայ ռազմագերի:

Մայիսի 4-ին Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է նաեւ Թբիլիսիի «Հերոսների» հրապարակ, ծաղիկներ խոնարհել հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցել:

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆ ՀԱՐԹԱԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Մայիսի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարչիաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի հետ: Հանդիպմանն ընդգծվեց Վրաստանի եւ Հայաստանի արդարադատության նախարարների միջև ընթացիկ տարվա հունվարին ստորագրված համագործակցության հուշագրի կարելությունը:

Վրաստանի վարչապետն ու Հայաստանի արդարադատության նախարարը քննարկեցին նաեւ Վրաստանի վարչապետի «Հարավային Կովկասում խաղաղ հարեւանության» նախաձեռնությունը: Այս համատեքստում հաստատվեց վրացական կողմի պատրաստակամությունը՝ նպաստելու տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը:

Մայիսի 1-ին Թբիլիսիում անցկացվեց վրաց-հայկական իրավական համաժողով, որի բացմանը խոսքով հանդես եկան Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն եւ Հայաստանի արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը:

Վրաստանի քրեակատարողական համակարգում իրականացվող բարեփոխումներին ծանոթանալու եւ փորձը կիսելու նպատակով, Հայաստանի արդարադատության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորությամբ, եռօրյա այցի շրջանակներում, այցելեց Ազգային արխիվ, Արդարադատության տուն, Քրեակատարողական ծառայություն եւ ծանոթացավ նրանց աշխատանքների վրացական մոդելին:

Վրաց-հայկական իրավական համաժողովի ավարտին ստորագրվեց փոխհամագործակցությունը վավերացնող համատեղ հռչակագիր:

«ԽՆՂԱՂ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՆԿԻՊՄԱՆ ԱՌԱՅՔՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմեյաուրու հետ:

Վրաստանի վարչապետի եւ Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի ու Հայաստանի միջև բարդացող հարաբերությունները եւ հետագա համագործակցության ոլորտները:

Իրակլի Դարչիաշվիլու խոսքով, երկկողմ հարաբերությունները զարգացնելու նպատակով Վրաստանը պատրաստ է նպաստել տարածաշրջանային երկխոսությանը՝ խթանելու երկրների տնտեսությունը, առեւտուրը, մշակույթը եւ այլ ոլորտներ: Հանդիպման առանցքում հիմնական հարցը վարչապետի «Խաղաղ հարեւանություն» նախաձեռնությունն է՝ որպես երկխոսության կարելու հարթակ:

Կողմերը քննարկեցին նաեւ Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունները:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական Արշակ Մուսախանյանը եւ Վրաստանի ներքին գործերի նախարար, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմեյաուրին:



Նշենք, որ նույն օրը կայացավ նաեւ Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմեյաուրու հանդիպումը Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության միջավայրի նշանակությունը: Ուշադրության կենտրոնում են եղել նաեւ Ուկրաինայում ընթացող գործընթացները:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի ղեկավար Գիվի Թունանիշվիլին, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գիրգի Դիրաձեն, Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական Արշակ Մուսախանյանը եւ Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը:

«Ինտերպրեսնյուս»-ը եւ «Ամենպրես»-ը՝ «Վրաստան»-ի համար խաձեն:

ԼԱՎ ՇԵՆՔ՝ ՓՈԽԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Հայաստանի եւ Վրաստանի միջև առկա է քաղաքական երկխոսության բարձր մակարդակ, մեր փոխհարաբերությունները դինամիկ զարգանում են տարբեր ձեւաչափերում եւ դրական մթնոլորտում, ինչը լավ հենք է փոխգործակցության հետագա ընդլայնման համար:

Վարչապետը ընդգծեց նաեւ, որ այսօր, երբ տարածաշրջանային իրավիճակը բավական լարված է, Հայաստան-Վրաստան ամուր գործընկերությունը կարելու է գործնականորեն իրականացնել խաղաղության ու կայունության համար:

Վրաստանի ԱԳ նախարարը Հայաստանի վարչապետին փոխանցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարչիաշվիլու ջերմ ողջույնները: Իլիա Դարչիաշվիլու խոսքով, Վրաստանը հետաքրքրված է Հայաստանի հետ բազմոլորտ համագործակցության խորացմամբ, երկկողմ օրակարգի առաջ մղմամբ եւ ողջունում է դրան միտված նախաձեռնություններն ու ծրագրերը:

Անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանային իրավիճակին եւ զարգացումներին: Մտքեր փոխանակվեցին նաեւ միջազգային անվտանգության հարցերի շուրջ:

Հանդիպման ավարտին, Նիկոլ Փաշինյանը խնդրեց իր ջերմ ողջույնները փոխանցել Վրաստանի վարչապետ Իրակլի Դարչիաշվիլուն:


ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱԶԴԱԿ՝ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊԵՏԱՆԸ



Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի հետ: Հանդիպմանը Հայաստանի նախագահը հույս հայտնեց, որ Իլիա Դարչիաշվիլու այցը կլինի արդյունավետ եւ նոր խթան կհաղորդի միջպետական կապերի է՛լ ավելի ամրապնդմանը:

Զրուցակիցները փաստեցին, որ Սադախլու-Բագրատաշեն անցակետում կառուցվող եւ «Բարեկամություն» անունն ստացած կամրջի շինարարությունն ընթանում է ակտիվ տեմպերով: Այս համատեքստում Վրաստանի արտաքին գործերի նախարարը համոզմունք հայտնեց, որ համատեղ ջանքերի շնորհիվ ավանդական բարիդրացիական եւ գործընկերային հարաբերությունները նոր խթան կստանան եւ ավելի կզարգանան:

ԸՆԴԳԾՎԵՑ ԲԱՐԻԴՐԱՑԻՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ



Ապրիլի 30-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:

Կողմերը քննարկեցին տարածաշրջանի անվտանգությանն ու կայունությանն առնչվող հարցեր: Ազգային ժողովի նախագահը նշեց, որ այս նպատակով Հայաստանը քայլեր է ձեռնարկում իր բոլոր հարեւանների հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ:

Իր հերթին, Վրաստանի արտաքին գործերի նախարարը նշեց, որ խաղաղությանը նպաստելու համար Վրաստանը միշտ պատրաստ է սերտ համագործակցության ու աջակցության:

Հանդիպումներին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը եւ Հայաստանում Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Իրակլի Կվանձա-